



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՏ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Բ. Խ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու

ՀԱՍԱՐՔԱԿԱՆ ԲԱՐՈՑԱԿԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ԳԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ՀԶՈՐ ՄԻՋՈՑ Է

ԵՐԵՎԱՆ
1960

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ
ՔԱՂՈՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ք. Խ. ԱՄԻՐԵԱՆՅԱՆ
Իրավաբանական գիտությունների փեկնածու

17:3X

Ա

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ՀԶՈՐ ՄԻՋՈՑ Է

A II
3545

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ՔԱՂՈՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ՏԱՐԱԾՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1 0 0 0



Տպագրվում է Հեկեուրյան վարչա-
րյանն առնթրե պետարյան և իրավունքի
սեկցիայի բյուրոյի որոշմամբ:

БАБКЕН ХАЧАТУРОВИЧ АМИРХАНИЯН

Кандидат юридических наук

**Общественно-моральное воздействие
мощное средство воспитания**

(На армянском языке)

Общество по распространению
политических и научных знаний

Армянской ССР

Ереван — 1960

Շահագործողական բոլոր հասարակարգերում, ինչպես նաև արդի բուրժուական պետություններում, ժողովուրդը գրեթե ոչ մի մասնակցություն չունի երկրի կառավարման գործում: Ինչպես պետական իշխանությունը, այնպես էլ կառավարման սխեմանը կենտրոնացված է մի բուռ մոնոպոլիստների ձեռքում, որոնք իրենց կամքը թելադրում են նրանց:

Տրամագծորեն հակառակ պատկեր ունի սովետական սոցիալիստական հասարակարգը: Հոկտեմբերյան ռևոլյուցիայի շնորհիվ դասակարգային հասարակության հազարավոր տարիների պատմության մեջ առաջին անգամ իրականացավ աշխատավոր մարդկության ազատագրությունը: Երկրի ժողովրդական տնտեսության իշխող բարձունքները՝ հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, ֆարրիկաները, գործարանները, հանքահորերը, հանքերը, երկաթուղային, ջրային ու օդային տրանսպորտը, բանկերը, կապի միջոցները, կոմունալ ձեռնարկությունները և բնակարանային հիմնական ֆոնդը հռչակվեցին որպես պետական, այսինքն համաժողովրդական սեփականություն:

Վերացվեցին ցարիզմի կողմից սրբազործված դասային նախկին տարբերություններն ու արտոնությունները, էկոնոմիկայից դուրս մղվեցին շահագործող դասակարգերի մնացորդները, բոլոր մարդիկ ճանաչվեցին իրավահավասար՝ անկախ իրենց ազգային և ռասայական պատկանելիությունից: Սովետական մարդը դարձավ իր բախտի և ապագայի տերը:

ու տնօրենը: Իրականացավ մարդկության լավագույն ներկայացուցիչների երազանքը:

Քաղաքական ու տնտեսական դարավոր կեղեքումից ազատագրված սովետական մարդը հնարավորություն ստացավ ապրել ու սահղծագործել իր կամքով, աշխատել ու վաստակել ոչ թե ուրիշների, այլ իր համար: Վ. Ի. Լենինը դեռ 1918 թվականին ասաց. «...սկսելով սոցիալիստական վերափոխությունները, մենք պետք է պարզ կերպով մեզ առաջադրենք այն նպատակը, որին ուղղված են, վերջիվերջո, այդ վերափոխությունները, այսինքն՝ կոմունիստական հասարակություն ստեղծելու նպատակը...»¹:

Կոմունիստական պարտիայի և նրա հիմնադիր Լենինի նախագծած նպատակին հասնելու ձգտումը սովետական ժողովրդին միշտ մղել է արիության ու խիզախության, ստեղծագործության ու սխրագործության: Շնորհիվ այդ ամենի, սովետական ժողովուրդը, Կոմունիստական պարտիայի ղեխավորությամբ, պատմականորեն անհամեմատ կարճ ժամանակամիջոցում ձեռք բերեց պատմության մեջ չսված նվաճումներ՝ երկրի պետական-քաղաքական, տնտեսական, կուլտուրական, գիտական և տեխնիկական առաջադիմության բնագավառում:

Քաղաղ աշխատանքի ընդամենը երեք տասնամյակների ընթացքում Սովետական Միության արդյունարերության արտադրանքն ավելացավ 36 անգամ՝ 1913 թվականի ցարական Ռուսաստանի մակարդակի համեմատությամբ: Ընդ որում, արտադրության առանձին ճյուղերի, ինչպես օրինակ, մեքենաշինության ու մետաղամշակման դժով, աճը բնութագրվեց ավելի բարձր ցուցանիշներով, այն է՝ 240 անգամ ավելի, որպիսին միայն երազելի է բուրժուական նույնիսկ ամենազարգացած երկրների համար:

Տեխնիկական այդօրինակ առաջադիմությամբ Սովետական

Միությունը գրավեց առաջին տեղը եվրոպայում և երկրորդ տեղը՝ ամբողջ աշխարհում:

Գերակատարելով ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանի առաջին տարվա առաջադրանքները, մեր երկիրը արտադրեց բնակչության մեկ շնչին հասնող ավելի շատ կենդանական յուղ, քան ԱՄՆ-ում: Կաթի արտադրության ընդհանուր ծավալով նույնպես ՍՍՌՄ-ն գերազանցում է ԱՄՆ-ին: Բացի այդ, ՍՍՌՄ-ն աշխարհի միակ տերությունն է, որը առաջինը մուտք գործեց տիեզերքի անհուն տարածությունները, հասավ Լուսնին, ձեռնարկեց նրանց ուսումնասիրությանը և դրանով իսկ մեկ անգամ ևս հաստատեց իր խաղաղասիրական քաղաքականությունը:

Արդյունաբերության ավտոմատացումը, գյուղատնտեսության մեքենայացումը, շինարարության հետզհետե կատարելագործումը զգալիորեն թեթևացնում են աշխատանքի պայմանները, որի շնորհիվ նա ձեռք է բերում մի նոր որակ, այսինքն՝ աստիճանաբար դառնում է հաճելի զբաղմունք ՍՍՌՄ-ի բոլոր աշխատավորների համար, ի տարբերություն բուրժուական երկրների, ուր աշխատանքը եղել ու մնում է որպես ծանր ու հոգեմաշ բնու:

Աճել և է՛լ ավելի է ամրապնդվել ՍՍՌՄ ժողովուրդների քաղաքական միասնությունը, ծաղկել և է՛լ ավելի է բարգավաճել ձեռով ազդային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան, որի վառ ապացույցներից մեկն էլ հանդիսանում են մեր Հայրենիքի մայրաքաղաք Մոսկվայում կազմակերպված ու հաջողությամբ անցկացված ՍՍՌՄ տարբեր ժողովուրդների կուլտուրայի և արվեստի ցուցադրման տասնօրյակները:

Ժողովրդական տնտեսության, գիտության, տեխնիկայի ու կուլտուրայի ասպարեզում տեղի ունեցած հսկայական առաջընթացի շնորհիվ վերակերտվել է նաև մարդկանց ներքնաշխարհը: Նրանց ճնշող մեծամասնությունը դարձել է ավելի գիտակից, կարգապահ, լրջախոհ:

Երկրի էկոնոմիկայի, կուլտուրայի և ողջ կյանքի այդօրինակ վերակերտումը նշանավորում է ՍՍՌՄ ժողովրդի քաղա-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, Հայկահրատ, Երևան, 1951 թ., էջ 139:

քական կոփվածությունը, բարոյական հսկայական ուժն ու
հոռանդը և անասմանափակ հեղինակությունը, որի զորու-
թյամբ նա քանիցս իրագործել է և այսուհետև էլ կիրագործի
նորանոր հրաշագործություններ:



Հենվելով Սովետական Միության ժողովրդի ձեռք բերած
աննախընթաց նվաճումների և բուռն առաջընթացի վրա, Սո-
վետական Միության Կոմունիստական պարտիայի XX և XXI
համագումարները խնդիր դրեցին վճռականորեն լիկվիդացնել
սոցիալիստական օրինականության խախտումները և, հետե-
վապես, էլ ավելի ամրապնդել Սովետական պետությունը:

Միաժամանակ պահանջվեց բարձրացնել սովետական հա-
սարակայնության դերը հասարակական կարգն ապահովելու և
սոցիալիստական համակեցության կանոնները պահպանելու
գործում: Սովետական հասարակայնության լայն ընդգրկումը
պետական կառավարման գործում, նրա ստեղծագործական
ակտիվության հետզհետե բարձրացումը միշտ եղել ու մնում
են Կոմունիստական պարտիայի ու Սովետական կառավարու-
թյան հոգատարության սկզբունքային դրույթներից մեկը, ի
հակադրություն շահագործողական պետությունների, որոնց
կառավարող շրջանները, ընդհակառակը, իրենց մեկուսացնում
են ժողովրդից և անխնա կերպով դատաստան տեսնում նրա
«անհնազանդ» ներկայացուցիչների հետ:

Անհիշելի ժամանակներից ի վեր շահագործողական պե-
տությունների իրավագետները փառաբանել են այն մոլի գա-
ղափարը, որ տիրող «կարգն ու կանոնը» խախտողներին պետք
է պատժել, դատաստանի ենթարկել:

Հայտնի են այդ պետությունների տիրակալների գործա-
դրած ահարկու միջոցները: Դրանց շարքին պետք է դասել,
օրինակ՝ հանցագործ համարված անձանց ցցի վրա նստեցնելը,
խաշաձև կերպով մեխելը, քարկոծելը, և այլն, որոնք հատուկ

են ստրկատիրական հասարակարգի բռնապետներին, կամ
ճիպտահարելը, խարույկի վրա այրելը և այլն՝ ֆեոդալական
հասարակարգում, կամ սեհարյուրակային ջարդերը, կինչի
դատաստանը՝ արդի բուրժուական հասարակարգում և այլն:

Հին պետական իշխանությունը՝ բուրժուա-կալվածատի-
րական բյուրոկրատիան ջախջախելու և նոր՝ Սովետական
պետություն ստեղծելու հետ միասին, ռևոլյուցիոն փոփոխ-
ման ենթարկվեցին նաև ցարական օրենքները: Մեծահան-
ձար կենինի անմիջական մասնակցությամբ ստեղծվեցին
նոր հասարակարգի իդեալներին լիովին համապատասխան
օրենքներ, որոնց շնորհիվ մեկընդմիշտ վերջ տրվեց ո՛չ միայն
բուրժուա-կալվածատիրական տիրակալների իշխանության
«իրավական հիմքին», այլև՝ մարդու արժանապատվությունն
ստորացնող ու անարգող այդ ամբողջի «օրենքներին» և
դրանցով սահմանված դժնդակ պատիժներին:

Զժխտելով սովետական օրենքները խախտող անձանց
պատժելու միջոցով հակազդելու սկզբունքը, սովետական
իրավունքը միաժամանակ հաստատուն կերպով սահմանում է
այդպիսի արարքներ կատարած անձանց վերադաստիարակե-
լու և նոր կյանք կառուցողների շարքերը վերադարձնելու մի-
ջոցառումները: Սովետական դատարանը ձգտում է հետևողա-
կան կերպով կենսագործել այդ միջոցառումները:

Ի տարբերություն բուրժուական և մյուս շահագործողական
իրավական սիստեմների մասսայական կոտորածի քաղաքա-
կանության, սովետական իրավունքը երբեք կանոն չի դարձրել
հանցագործին ֆիզիկական ոչնչացման կամ տանջանքի են-
թարկելը: Ծիշա է, մահապատիժը որպես պատժի առավելա-
զույն, բայց բացառիկ միջոց, ժամանակ առ ժամանակ մեզ
մոտ թույլ է տրվում, սակայն միայն այն դեպքերում, երբ
կատարվել է առանձնապես ծանր հետևանքներ ունեցող ա-
րարք՝ ուղղված պետական կարգի, կամ մարդու կյանքի դեմ:

Բուրժուական իրավագիտության ոչ քիչ ջատագովներ պընդում են, որ հանցագործներն իրենց դեմքի և մարմնի կառուցվածքի մեջ ունեն տարբերիչ առանձնահատուկ նշաններ, որ իբր թե նրանք ի բնե ծնվում են որպես այդպիսիք, այսինքն՝ հանցագործներ: Գեղար չէ կուհե, որ այդպիսի հետևության նպատակն է՝ «հիմնավորել» մարդուն ֆիզիկապես ոչնչացնելու անհրաժեշտությունը:

Կտրականապես ժխտելով այդ տմարդի պնդումը, սովետական իրավագիտությունը ելնում է այն բանից, որ բոլոր մարդիկ ծնվում են ֆիզիոլոգիական միեկնույն պայմաններում և միեկնույն կանոններով, հետևապես նրանցից մեկը չի կարող լինել որպես ի ծնե հանցագործ, իսկ մյուսն՝ ընդհակառակը: Մարդիկ հանցագործ են դառնում միայն իրենց կյանքի կոնկրետ պայմանների, դասակարգային հակադրության հետեվանքով:

Սովետական իրականության մեջ հանցագործ երևույթներն առաջանում են մարդկանց մի մասի գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների առկայության պատճառով: Հետևապես այդ երևույթները կարող են և պետք է հաղթահարվեն հնի մնացուկներն աստիճանաբար վերացնելու, իսկ դրանց ազդեցության տակ հանցագործ արարք թուլանալուց ներքին կոմունիստական շինարարության մեջ ներգրավելու միջոցով:

Հետևելով այդ սկզբունքին, Սովետական պետությունը միշտ էլ ներողամիտ և մարդասիրական վերաբերմունք է հանդես բերել զանազան ժամանակներում այս կամ այն արարքի համար դատապարտվածների նկատմամբ և ազատ է արձակել նրանց՝ նշանակված պատիժը որոշ չափով, կամ նույնիսկ բոլորովին չկրելու պայմաններում: Լուսաբանման համար որպես օրինակ կարող է ծառայել Մոսկվա—Վոլգա ջրանցքի շինարարության մեջ ներգրավված դատապարտյալների նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքը, որոնցից շատերը այդ շինարարության մեջ բարեխղճորեն աշխատելու կապակցությամբ վաղաժամ ազատվեցին հետագա պատիժը կրելուց: Նույնիսկ ծանր հանցագործություն կատարած ոչ քիչ դատա-

պարտյալներ վաղապես ազատվել ու սոցիալիստական շինարարության մեջ են ներգրավվել ընդհանուր և մասնակի ներման ընդամենի կատարի շնորհիվ, որոնք հրատարակվել և իրականացվել են գրեթե ամեն տարի, առանձնապես 1953—1957—1959 թվականներին:

Սակայն չի կարելի ժխտել, որ սոցիալիստական օրինականության լենինյան սկզբունքներից շեղվելով, այլև այսպես թե այնպես ենթարկվելով իմպերիալիզմի վարձկան, այժմ արդեն իսկ մերկացված ու ջախջախված, արգահատելի Բերիայի գլխավորած շայկայի գործադրած մեքենայություններին, մեզ մոտ անցյալում տեղ-տեղ թույլ են տրվել որոշ անօրինականություններ:

Անշեղորեն կենսագործելով սոցիալիստական օրինականության լենինյան սկզբունքն այն մասին, որ «...օրինականությունը չի կարող լինել Կալուգայի ու Կազանի օրինականություն, այլ պետք է լինի միասնական համառուսաստանյան և նույնիսկ միասնական՝ Սովետական Ռեպուբլիկաների ամբողջ ֆեդերացիայի համար»¹, Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը, առաջնորդվելով ՍՄԿՊ XXI համագումարի պատմական որոշումներով, վերջերս ձեռնարկեցին մի շարք նոր միջոցառումներ, որոնք ունենալով դեմոկրատական հսկայական նշանակություն, ուղղված են այն բանին, որպեսզի սոցիալիստական համակեցության կանոնները խախտողների դեմ մղվող պայքարի մեջ ավելի լայնորեն ընդգրկվի սովետական հասարակայնությունը և նրա միջոցով էլ իրագործվի այդպիսի խախտումներ թույլ տված անձանց ուղղումն ու վերադաստիարակությունը:

Նշված միջոցառումների թվում հիշատակության արժանի են՝

1. Ժողովրդական կամավոր դրուժինաների ստեղծումը և վարչական օրգանների, այդ թվում առանձնապես միլիցիայի

¹ Վ. Ի. Անիև, Երկեր, հ. 33, Հայպետհրատ, Երևան, 1951 թ., էջ 430:

օրգանների ֆունկցիաների որոշ մասը նրանց ձեռքում կենտրոնացնելը (տե՛ս ՍՍՆՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի 1959 թվականի մարտի 2-ի որոշումը «Հասարակական կարգի պահպանման մեջ աշխատավորության մասնակցության մասին»), որով հաստատվել է նաև այդ դրուժինաների ժամանակավոր կանոնադրության նախագիծը¹:

2. ՍՍՌ Միության և Միութենական ռեսպուբլիկաների քրեական օրենսդրության հիմունքների ու քրեական դատավարության օրենսդրության հիմունքների, այլև ՍՍՌ Միության, Միութենական և Ավտոնոմ ռեսպուբլիկաների դատարանակազմության մասին օրենսդրության հիմունքների ընդունումը ՍՍՌՄ հինգերորդ գումարման Գերագույն Սովետի երկրորդ սեսիայի կողմից²:

3. Ոչ առանձնապես ծանր հանցագործություններ կանոնադատապարտաշանքների վիճակը տնօրինելու հարցերով զբաղվելու համար սովետական հասարակայնության ներկայացուցիչների կազմով կառավարական հանձնաժողովներ ստեղծելը և կալանավաչրերում լավ վարքագիծ հանդես բերած կալանավորներին կալանքից ազատելու ուղղությամբ այդ հանձնաժողովներին լայն իրավունքներ վերապահելը (տե՛ս ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահության 1959 թ. օգոստոսի 14-ի որոշումը):

4. Հայկական ՍՍՌ դատարանակազմության մասին օրենք ընդունելը Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի կողմից³:

5. Հասարակայնորեն նվազ վտանգավոր արարքներ թույլ տված անձանց քրեական պատասխանատվության չհենթարկելու և արդեն իսկ պատասխանատվության կանչվածների նկատմամբ կալանքի հետ կապ չունեցող պատիժներ նշա-

¹ ՍՍՌՄ Կառավարության Որոշումների ժողովածու, 1959 թ., № 4, հոդ. 25 (ռուս. հրատ.):

² ՍՍՌՄ Գերագույն Սովետի օրենքներն ու որոշումները, էջ 28—50, 75—85, 96—118, Մոսկվա, 1959 թ. (ռուս. հրատ.):

³ Տե՛ս «Սովետական Հայաստան» թերթի 1959 թ. նոյեմբերի 20-ի համարը:

նակելու և հասարակական կազմակերպությունների միջնորդությունների հիման վրա վերջիններիս դաստիարակմանը հանձնելու մասին ՍՍՌՄ Գերագույն Դատարանի Պլենումի կողմից ղեկավար ցուցումներ տալը¹:

6. «Սովետական օրինականության և սոցիալիստական համակեցության կանոնների խախտումների դեմ մղվող պայքարում հասարակայնության դերի բարձրացման մասին» և դրա դրույթներին համապատասխան՝

ա) «Ընկերական դատարանների օրինակելի կանոնադրություն»:

բ) «Անչափահասների գործերի հանձնաժողովների օրինակելի կանոնադրություն» նախագծեր ընդունելն ու այդպիսիք համաժողովրդական քննարկման ներկայացնելը²:

Ըստ իրենց բովանդակության այս փաստաթղթերը վաղ ապացույց են մարդու նկատմամբ ցուցաբերվող այն մեծ հարգանքի, որը պատկերացնել չի կարելի բուրժուական նույնիսկ ամենադեմոկրատական համարվող պետության մեջ: Թեև այդ միջոցառումների վերաբերյալ ակտերից մի քանիսը դեռևս նախագծեր են, սակայն նրանք փաստորեն գործող օրենքի ուժ են ստացել և կենսագործվում են:

Առաջին հայացքից թվում է, թե դա անօրինականություն է, որովհետև կիրարկման է դրվում մի ակտ, որը օրինական ուժ չի ստացել, սակայն այդպիսի մեկնաբանության համար տառացիորեն ոչ մի հիմք չկա: Ընդհակառակը, դա ցույց է տալիս, որ այդ միջոցառումը խորն արմատներ է գցել սովետական իրականության մեջ: Դա, այնուհետև, ցույց է տալիս, որ այն արտահայտում է ժողովրդական լայն մասսաների ձգտումներն ու ցանկությունները, լիովին համապատասխանում է նրանց շահերին ու նպատակներին և այդ պատճառով էլ լայն պաշտպանություն է գտնում նրանց շարքերում ու

¹ Տե՛ս ՍՍՌՄ Գերագույն դատարանի Պլենումի 1959 թ. հունիսի 19-ի որոշումն առանձին հրատարակությամբ:

² Տե՛ս «Սովետական Հայաստան» թերթի 1959 թ. հոկտեմբերի 23-ի համարը:

արժանանում նրանց անվերապահ հավանությունն ու գոհունակությունը: Այս պայմաններում ոչ մի անօրինակախության մասին խոսք չի հնչել չի կարող:

Բացի այդ, դա նշանակում է, որ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Սովետական կառավարությունը խորաթափանց կերպով կանխորոշում են պարտիայի ու ժողովրդի իղձերն ու խոհերը, կենտրոնով դրանից և կոմունիզմի կառուցման նպատակային գրույթներին, մշակում ու կենսագործում են այն աստիճան խելացի ու օրինաշարի միջոցառումներ, որոնք արժանանում են խանդավառ ընդունելության:

Վերջապես, դա նշանակում է, որ Կոմունիստական պարտիան, նրա Կենտրոնական Կոմիտեն, Սովետական կառավարությունը և սովետական ժողովուրդը գտնվում են անխզելի միասնության մեջ: Պարտիան ճիշտ կերպով է ըմբռնում ժողովրդի շահերը, նպատակասլաց կերպով է կազմակերպում և առաջնորդում նրան, իսկ ժողովուրդն էլ ըստ արժանվույն է զնահատում պարտիային, մեծագույն հույսով ու աներեր կամքով է դիմավորում պարտիայի ու կառավարության ձեռնարկած միջոցառումներին, պարզ գիտակցելով, որ այդպիսի ամեն մի միջոցառում ոչ այլ ինչ է, եթե ոչ մի նոր քայլ ժողովրդի բարեկեցության բարձրացման գործում: Դա օրինական հպարտության մեջ է լցնում սովետական ամեն մի աշխատավորի սիրտը, նրան նախապատրաստում, ոգեշնչում, գործիմացության է կոչում և առաջնորդում դեպի նորանոր հաջողություններ:

Ահա բարոյական այն անսպառ ուժի աղբյուրը, որն ունակ է և իրոք առաջացրել է ժողովրդական նախաձեռնության հզոր հորձանք՝ ամեն մի դժվարություն հաղթահարելու և հենց այդ դժվարին պայմաններում նոր նվաճումներ ձեռք բերելու համար:

Եվ իրոք, ինչպիսի՞ անսովոր համարված բերդեր չի խորտակել սովետական ժողովուրդը: Ինչպիսի՞ առասպելական սխրանքներ չի իրագործել, ինչպիսի՞ անհաղթահարելի հա-

մարված բարձունքներ չի նվաճել նա: Հենց միայն միջմուրակային տարածության հաղթահարումը և սովետական վիճակը կոտորածի վրա հասցնելը դրա փառավոր ապացույցներից մեկն է, բայց տակավին ոչ վերջինը:

Այս հրաշագործությունների ֆոնի վրա, նշված ձեռնարկումները ներկայանում են ոչ թե որպես հիպոթեզ, այլ որպես վաղվա անվերապահ իրականություն:

Վերցնենք, օրինակ, ժողովրդական կամավոր զրուժինաների ստեղծումը: Ամենից՝ առաջ պետք է ընդգծել, որ զրուժինաներ ստեղծելու մասին որոշումը հրապարակելուց և զրուժինաների ժամանակավոր կանոնադրությունն ընդունելուց անմիջապես հետո, որոնցով ամփոփվեց և ուղղություն տրվեց զրուժինաների ստեղծման տեղական նախաձեռնությանը, արտագրության մեջ աշխատող առաջավորներից մի քանի օրվա ընթացքում, գրեթե ինքնաբերաբար կերպով, մեր ռեսպուբլիկայի հիմնարկ-ձեռնարկություններում կազմակերպվեցին մի քանի հարյուրի հասնող կամավոր զրուժինաներ՝ քաղաքային, շրջանային իրենց շտաբներով հանդերձ: Ներկայումս ռեսպուբլիկայում գործում են ավելի քան 1120 զրուժինաներ՝ 21 հազար զրուժինիկներով, որը ժողովրդական մեծ ուժ է: Գրուժինիկների այդ հսկա բանակը ամբողջ պատրաստակամությամբ զբաղվում է իր առջև ծառայած խնդիրներով, այն է՝ հասարակական կարգի պահպանության գործով, ոչ աշխատանքային ժամերին, թե՛ ցերեկ, թե՛ գիշեր ժամանակ: Գրուժինաները հավատարիմ են մնացել իրենց տված խոստումներին, նրանք զգալի հաջողությամբ գործի են վերածում ստանձնած պարտավորությունները: Չի կարելի չնկատել, որ դա մի հզոր ուժ է ընդդեմ հասարակական կարգը խախտողների:

Ներկայումս ժողովրդական կամավոր զրուժինաների գործունեության համեմատաբար ոչ երկար ժամանակվա փորձը ցույց է տալիս, որ տվյալ ձեռնարկումը լիակատար կերպով արդարացնում է իրեն, որովհետև հասարակական կարգի խախտումներն այժմ զգալիորեն քիչ են, քան մինչ այդ, իսկ դա ամենակարևորն է մեզ համար:

Հասարակական կարգի խախտումները ժողովրդական կամավոր դրուժինաների միջոցով հայտնաբերվում ու հակադրվում են անմիջականորեն, իսկ խախտում թույլ տվողը կարգի է հրավիրվում տեղն ու տեղը: Ի՛նչ խոսք, որ դա լավ օրինակ է դառնում սովյալ անձի համար, որովհետև նա դաստիարակվում է թույլ տված կոնկրետ արարքի կապակցությամբ՝ գործարար կերպով, որը դաստիարակչական մեծ նշանակություն ունի նաև շրջապատի համար: Մինչդեռ, ոչ քիչ դեպքերում, երբ խախտում թույլ տվողի գործով զբաղվում են վարչական օրգանները, ասենք միլիցիան, ապա կարգը խախտողը գտնվելով անձանոթ շրջապատում, չի ազդվում ընկերների այրող հայացքից, երբեմն էլ կորցնելով իր հավասարակշռությունը, թույլ է տալիս ավելի վատ արարք, քան մինչ այդ և կամա-ակամա ծանրացնելով իր վիճակը, այն հասցնում է բրեհական պատասխանատվության աստիճանի, իհարկե, բոլորովին իզուր:

Երևան քաղաքի նախկին կիրովյան շրջանի միլիցիայի բաժանմունքը 1959 թվականի հունվարին քաղաքացի «Ա»-ին միլիցիայի հերթապահություն էր բերել առանց հերթի կինուցուցադրման տոմս վերցնելու և հերթը խանգարելու համար: Այս դեպքում նա ենթակա էր կարգի հրավիրման ու նախազգուշացման: Այնինչ, նա ապակողմնորոշվել և թույլ էր տվել ավելի վատ արարք, այն է՝ կոտրել էր սեղանի ապակին ու ջրամանը, կոտորները շարտել այս ու այն կողմ և հայհոյել իշխանության ներկայացուցիչներին, այսինքն՝ կատարել էր խուլիգանություն, որն անհամեմատ ծանր արարք է, քան հերթը խանգարելը:

Բոլորովին այլ վիճակ է ստեղծվում, երբ գործին միջամբանում է ժողովրդական կամավոր դրուժինան՝ հասարակական կարգ ու կանոնի հասարակական պահպանը: Այս դեպքում խախտում թույլ տվողն ու նրա դեմ պայքարողը, այսինքն՝ գրուժինայի ղեկավար-ծառայողներն են, խախտում թույլ տվողը գտնվում է ընկերների, իր նիստ ու կացին, վարք ու բարքին տեղյակ անձանց շրջապատում:

Հետևապես, նա իրեն չի դրսևորում այնպես, ինչպես նախորդ դեպքում: Իսկ դրուժինան էլ, ճանաչելով հասարակական կարգը խախտողին, պարզ պատկերացում ունենալով նրա ընտանեկան, աշխատանքային, տնտեսական պայմանների մասին, նրան մոտենում է ըստ գործի կոնկրետ հանգամանքների: Մեկ դեպքում ներում է նրան, երբ ակներև է, որ խախտումը կատարվել է հանգամանքների պատահական բերմամբ: Մյուս դեպքում, նայած անհրաժեշտության, ձեռք է առնում միջոցներ, երբ խախտում թույլ տալը իրավախախտի մոտ կրկնվող երևույթ է: Վերջին դեպքում խախտում թույլ տվողի հարցը փոխադրվում է կոլեկտիվի ընդհանուր ժողով, լուսաբանվում է մամուլում և այլն: Իրավախախտի նկատմամբ կարող են գործադրվել նաև կազմակերպչական բնույթի միջոցառումներ, այն է՝ կարող է հարց դրվել, որպեսզի փոխվի նրա աշխատանքի տեղը, բնույթը, նշանակվի պակաս վարձատրվող աշխատանքի, ինչպես նաև տուժի ենթարկվի այն կազմակերպություն կողմից, որի անգամն է խախտում կատարողը: Եթե այս միջոցառումները չազդեն խախտում թույլ տվողի վրա, եթե դա սակավ հնարավոր է սովետական իրականության մեջ, ապա հարցը կարող է բարձրացվել ընկերական դատարանների կամ վարչական օրգանների առաջ՝ նրան ավելի խիստ պատասխանատվության ենթարկելու համար:

Այդ տեսակետից որպես բնակչության հասարակական ինքնագործունեության կազմակերպություններ մեծ դեր ունեն թաղային կոմիտեները, հասարակական կարգի պահպանման, բնակֆոնդի բարեկարգման ու ճիշտ շահագործման, սանիտարական կանոնների պահպանման, բնակչության մեջ կուլտուր-կենցաղային և այլ միջոցառումներ անցկացնելուն աջակցելու գործում:

Ինչպես սահմանված է թաղային կոմիտեների կանոնա-

դրություններ¹, այդ օրգանները կուտ-կենցաղային բազմաթիվ հարցերով զբաղվելուց բացի, իրենց տերիտորիայի սահմաններում պայքար են կազմակերպում պարազիտային տարրերի, թափառաշրջիկների, մուրացողների, ապօրինի շինարարությունների, արգելված արհեստով, սպեկուլյացիայով զբաղվողների և հարբեցողությունների պարապոզների, այլևայլ զանցառությունների դեմ: Միայն Երևան քաղաքում ներկայումս գոյություն ունեն ավելի քան 230 թաղային կոմիտեներ², որոնք հայտնաբերելով այդօրինակ փաստեր, քննության են առնում և նշում համապատասխան միջոցառումներ ու դրանով իսկ օգնում համապատասխան սովետների գործկոմիտեներին և միլիցիայի օրգաններին հասարակական կարգի պահպանությունն ամրապնդելու գործում:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ այսպիսի շրջահայաց ու գործարար մոտեցումը, որն արդյունք է ժողովրդական նախաձեռնության, խելացի ու նպատակահարմար է և շատ բանով կնպաստի բնակչության կոմունիստական դաստիարակությանը: Մնում է միայն հետզհետե կատարելագործել, ստեղծագործարար զարգացնել ժողովրդական կամավոր դրուժինաների, ինչպես նաև թաղային կոմիտեների գործունեությունը, դրանք համալրել է՝ չ ավելի զիտակից, իրենց անելիքը լավ պատկերացնող անձանցով, նրանց աշխատանքին ավելի կազմակերպվածություն հաղորդել և սպասվելիք արդյունքն ապահովված կլինի:



Սոցիալիստական օրինականության լենինյան սկզբունքն իր կատարելությունը հասցնելու տեսակետից նշանակալից տեղ ունեն ՍՍՌ Միության և Միութենական ռեսպուբլիկանե-

¹ Կանոնադրություն Երևան քաղաքի թաղային կոմիտեների, Երևան, 1959 թ.:

² Տե՛ս Աշխատավորների Դեպուտատների Երևանի քաղաքային Սովետի գործկոմի 1959 թ. ապրիլի 27-ի որոշումը:

րի քրեական ու քրեական դատավարության օրենսդրության հիմունքները, այլև ՍՍՌ Միության, Միութենական ու Ավտոնոմ ռեսպուբլիկաների դատարանակազմության հիմունքները:

Դրանցից քրեական օրենսդրության հիմունքներով զգալի փոփոխության է ենթարկվել մինչև այժմ էլ գործող քրեական օրենսդրությունը: Նշված հիմունքներով, մասնավորապես, զգալի չափով պակասեցվել է ազատազրկում պատժամիջոցի տևողությունը այն է՝ եթե նախկինում թույլատրվում էր մինչև 25 տարի, ապա այսուհետև այն կարող է նշանակվել մինչև 10 տարի ժամանակով: Միայն հատկապես ծանր հանցագործությունների ու առանձնապես վտանգավոր կրկնահանցագործների գործերով՝ ոչ ավելի, քան 15 տարի:

Բացի այդ, ազատազրկման ժամանակն ավելի քան կիսով չափ կրճատվելու պայմաններում, այդ հիմունքներով թույլ է տրվում կալանքի կեսը կրելուց հետո բանտարկությունը փոխարինել զաղութային ռեժիմով, եթե բանտարկվածը հանդես կկրերի օրինակելի վարքագիծ:

11
A 345

Լուրջ փոփոխություններ են կատարվել նաև քրեական դատավարության օրենսդրության հիմունքներում: Դրանցով, մասնավորապես ընդլայնվել է մեղադրյալի պաշտպանության իրավունքը: Ընդ որում, եթե մեղադրյալն անչափահաս է, կամ էլ այնպիսին է, որ իր ֆիզիկական ու հոգեկան պակասությունների հետևանքով անձամբ չի կարող իրականացնել իր պաշտպանական իրավունքը, ապա կարող է ունենալ դատապաշտպան՝ իրեն մեղադրանք առաջադրելու պահից, իսկ մյուս մեղադրյալները՝ նախաքննությունն ավարտվելուց հետո:

Դրա հետ մեկտեղ, նշված հիմունքներում հատկապես ընդգծվում է ցուցադրական դատավարություններ կազմակերպելու և դատական նիստերին աշխատավորական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից հասարակական մեղադրողների ու հասարակական պաշտպանների մասնակցության անհրաժեշտությունը:



Ի փոփոխումն նախկինում գործող կարգի, դատարանա-կազմության մասին օրենսդրության հիմունքներով դատարանակազմության մասին օրենք ընդունելու իրավունքը ՍՍՌ Միության օրենսդրական օրգանների իրավասությունից հանվել և վերապահվել է միութենական ռեսպուբլիկաների Գերագույն Սովետներին: Այսպիսով, այդ փոփոխությունների հիման վրա մի կողմից՝ ընդլայնվել է միութենական ռեսպուբլիկաների պետական իշխանության բարձրագույն օրգանների իրավասությունը և բարձրացել է սովետական հասարակայնության դերը, մյուս կողմից նվազեցվել է պատիժների տեղությունը չափը ու լայնացվել քրեական պատասխանատվության կանչվածի պաշտպանական իրավունքը: Այս ամենի շնորհիվ մի նոր շուրջ քայլ է կատարվել սովետական դեմոկրատիան է՛լ ավելի զարգացնելու — նոր աստիճանի բարձրացնելու և իրավասխատում կատարած անձին իսկապես դատարարակելու ուղղությամբ:

Այդ փաստաթղթերը վառ ապացույց են այն խորը մարդասիրության, որը կարող է լինել և իրոք գոյություն ունի միայն սոցիալիստական հասարակարգում:

Թվարկված ձեռնարկումների շարքում առանձնապես կարևոր է ընկերական դատարանների և անչափահասների գործերի հանձնաժողովների կազմակերպումը: Պետք է սասել, որ սոցիալիստական համակեցության կանոնների խախտումների դեմ ընկերական դատարանների ու նշված հանձնաժողովների միջոցով պայքար կազմակերպելը նոր հրևույթ չէ: Այդպիսի դատարաններ գոյություն են ունեցել նաև մոտ անցյալում, իրենց կանոնադրությամբ հանդերձ, որը հաստատվել է ՍՍՌՄ Մինիստրների Սովետի 1951 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ: Սակայն, նշված կանոնադրությամբ այդ օրգաններին վերապահվել են ոչ այնքան լայն իրավունքներ, ինչպես այժմ: Չնայած դրան, անցյալում նրանք որոշ ծառայություն մատուցել են: Բայց ինչ-ինչ պատճառներով նրանց գործունեությունը հետագայում չխթանվեց ու չծավալվեց, իսկ աշխատանքի արդյունքը դարձավ աննշան: Նրանց վերջին տարի-

ների աշխատանքի պատկերը չէր վկայում այն մասին, որ այդ օրգանները համակեցության կանոնների խախտումների դեմ մղվող պայքարի կարևորագույն օղակներն են:

Հանրահայտնի է, որ պատանիները հեշտությամբ են ենթարկվում վատթար ազդեցության: Դաստիարակման ոլորտից դուրս մնալու, անբարեհույս շրջապատի հանդիպելու դեպքում, նույնիսկ անկախ իրենց կամքից և անգիտակցաբար, նրանք ավելի հաճախ կարող են թույլ տալ սովետական օրինականության և սոցիալիստական համակեցության կանոնների խախտումներ: Անուշադրության մատնել այս հանգամանքը երբեք չի կարելի, որովհետև դա կարող է ունենալ լուրջ հետևանքներ:

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը միշտ էլ մեծ հոգատարությամբ են վերաբերվել աճող սերնդի դաստիարակության ու բարգավաճման գործին:

Այս պայմաններում հրամայական պահանջ էր անշափահասների գործերով հատուկ օրգանների ստեղծումը: Արձագանքելով այդ հրատապ պահանջին, ՍՍՌՄ Գերագույն Սովետի օրենսդրական նախագծումների հանձնաժողովների կողմից մշակվեցին և համաժողովրդական քննարկման ներկայացվեցին անչափահասների հանձնաժողովների և ընկերական դատարանների կազմավորման ու գործունեության վերաբերյալ օրինակելի կանոնադրության նախագծեր, որոնցով այդ օրգաններին տրվում է ավելի ընդարձակ լիազորություններ, բան մինչ այդ:

Ըստ ընկերական դատարանների նախկինում գործող կանոնադրության, թեև այդպիսի դատարաններ կարող էին ստեղծվել նույնիսկ տնային կառավարչություններում ու բնակչին կոոպներում և կարող էին քննության առնել բնակարանի նկատմամբ անտնտեսվար վերաբերմունքի, կոմունալ ծախսերի վճարման և այլ վեճեր, սակայն այդպիսի դատարաններ համարյա չստեղծվեցին, ուստի և համարյա թե չկատարեցին իրենց վերապահված խնդիրները: Ըստ այդ դատարանների կանոնադրության դրույթների՝ ընկերական դատար-

րանները հանդիսանում էին սոսկ կարգապահական պատասխանատվության օրգաններ, ուստի նրանք չէին կարող զբաղվել ոչ աշխատանքային վայրերում առանձին քաղաքացիների թույլ տված զանցառությունների և առավել ևս բնտանական-կենցաղային բնույթի գործերի քննությունը: Ահա փատական այն հիմքը, որի պատճառով, ոչ աշխատանքային վայրերում տեղի ունեցած զանցառությունների հարցերով, հասկանալի է, որ պետք է զբաղվեին վարչական օրգանները, անկախ այն բանից, թե ինչպիսին է իրավախախտումը՝ էական, թե՛ աննշան:

Դա ընկերական դատարանների նախկին կանոնադրության ամենալուրջ թերությունն է, որովհետև ուշադրության առնելով իրավախախտման տեղի հարցը, որն այնքան էլ բնորոշ չէ մի կողմ է թողել զանցառության էությունը, դրան համապատասխան և միատեսակ վերաբերմունք ցույց տալու, ուստի և անհիմն խտրականության տեղիք շտալու հանգամանքը:

Ինքնաբերաբար ստեղծվել էր մի այնպիսի վիճակ, որ, օրինակ, փողոցում թույլ տված միևնույն զանցառության համար քաղաքացին պետք է արժանանար ավելի խիստ ներգործության վարչական օրգանների կողմից, քան աշխատանքի վայրում տեղի ունեցած նույն զանցառության համար՝ ընկերական դատարանների կողմից, պատկերացում ստեղծելով, թե վերջինը քիչ ավելի կարևոր է, քան մյուսը, որ, իհարկե, աննորմալ երևույթ էր: Հարկ չկա, իհարկե, ծանրանալ հարցի այն կողմի վրա, որ այդ թերության պատճառով, իրավախախտումներից առժամ անձինք տարվելով իրավախախտում թույլ տվողին ավելի խիստ պատժելու մտայնությամբ, հաճախ ամեն մի հարցով, անկախ իրավախախտման աստիճանից, դիմում էին վարչական օրգաններին ու նրանց համար ստեղծում ոչնչով չարդարացված զբաղմունք և իզուր վատնում նրանց ժամանակը:

Նման թերություններով էին տառապում նաև անչափահասների գործերով զբաղվող օրգանների գործողությունները կարգավորող ակտերը:

Ներկայումս համաժողովրդական քննարկման գրված՝ ընկերական դատարանների և անչափահասների գործերի հանձնաժողովների օրինակելի կանոնադրությունների նախագծերը վերացնում են վերևում նշված թերությունները: Այդ օրենսդրական ակտերով լիազորություններ ստացած ընկերական դատարաններն ու անչափահասների գործերի հանձնաժողովներն ըստ իրենց իրավասության շրջանակների, կզբաղվեն ի հայտ բերված բոլոր իրավախախտումներով՝ անկախ այն բանից, թե որտե՛ղ են դրանք տեղի ունեցել՝ հիմնարկ-ձեռնարկություն՝ ամ, կոլտնտեսություն՝ ամ, թե՛ սովխոզում, տըրանսպորտի օրգաններում, գյուղական ծխո՞ւմ, թե՛ ընտանիքում, եթե, իհարկե, դրանք հանրայնորեն խիստ վտանգավոր արարքներ չեն:

Նոր կանոնադրությամբ գործող ընկերական դատարանները քննության կառնեն՝

1. աշխատանքային կարգապահության խախտումների, այդ թվում առանց հարգելի պատճառների գործալքության, աշխատանքից ուշանալու, աշխատանքը շուտ թողնելու, հարբած վիճակում աշխատանքի անցնելու, անորակ աշխատանք կատարելու, կամ իր պարտականությունների նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով խոտան առաջացնելու, պարապորդ տալու, անլուսանգության տեխնիկայի կանոնները խախտելու և իր պատասխանատվության տակ գտնվող գույքի նկատմամբ անփութորեն վարվելու վերաբերյալ գործերը,

2. պետական կամ հանրային նյութերի, սարքավորումների ու տրանսպորտի ապօրինի օգտագործումից բխող գործերը, եթե, իհարկե, զգալի վնաս չի հասցվել պետությանը, կամ հասարակական կազմակերպություններին,

3. հանրօգուտ աշխատանքից խուսափելու և պորտաբույծ կյանք վարելու վերաբերյալ գործերը,

4. երեխաներին դաստիարակելու պարտականությունները չկատարելու, զառամյալ ծնողներին օգնություն ցույց չտալու վերաբերյալ գործերը,

5. վիրավորանքի, հարվածներ հասցնելու, ստահող, անվա-

նարկող հերյուրանքներ առաածելու վերաբերյալ գործերը, եթե տեղի են ունեցել առաջին անգամ և առկա է տուժողների բողոքները, կամ միջնորդություններ հասարակայնությունից:

6. մանր որսագողությունների, անտառախախտումների, ցանքերն արածացնելու, տնկարանները փշացնելու, մանր սպիկուլյացիայի, պետական կամ հանրային ունեցվածքի մանր հափշտակումների, մանր խուլիգանություն, որոնք կատարվել են առաջին անգամ, հարբեցողության, զազրախոսություն, ինքնիրավւոթյան, առևտրի կանոնների մանր խախտումների վերաբերյալ գործերով,

7. ոչ վաճառքի նպատակով օդի և ոգելից այլ խմիչքներ առաջին անգամ պատրաստելու, դրանց ստանալու համար ապարատներ պատրաստելու և պահելու գործերով.

8. բնակարաններում ներքին կարգի խախտումների, շինություններն ու կոմունալ սարքավորումները, այլ և ծառերն ու տնկիները փշացնելու և վարձավճարի վերաբերյալ գործերով.

9. քաղաքացիների գույքային վեճերի գործերով՝ 500 ռուբլու սահմաններում և 1000 ռուբլու սահմաններում կողմերի համաձայնությունով.

10. գյուղական ծխերի բաժանության և մասնահանման վեճերի գործերով, եթե կողմերը համաձայն են դրան.

11. վարչական այն խախտումների և հակահասարակական արարքների վերաբերյալ գործերով, որոնք չեն նշված վերևում, եթե վարչական օրգանները կամ հասարակական կազմակերպությունները գործը հանձնեն ընկերական դատարաններին, այլև այն հանցագործությունների վերաբերյալ գործերով, որոնք հասարակական մեծ վտանգ չեն ներկայացնում, կատարվել են առաջին անգամ և եթե դատաքննչական օրգանները հնարավոր համարեն այդպիսիք հանձնել ընկերական դատարանների քննությանը:

Ինչպես նկատելի է, այս նախագծերի հիման վրա ստեղծվող ընկերական դատարանները պետք է լինեն ոչ թե սահ-

մանափակ իրավասություն ունեցող ու առանձին հարցերով զբաղվող օրգաններ, այլ զանցառությունների, իրավախախտումների և որոշ զեպքերում նույնիսկ հանցագործությունների դեմ պայքարի համապարփակ օրգաններ:

Ունենալով գործունեություն լայն շրջանակ և ընդարձակ ֆունկցիաներ, ընկերական դատարանները, հասարակության լայն շերտերի ստեղծագործական ակտիվությամբ, շատ դեպքերում կոնկրետ կերպով քննության կառնեն հավանաբար իրենց շրջապատում, իրենց կողքին, աչքի առաջ տեղի ունեցած իրավախախտումները, որոնք թույլ կտրվեն իրենց համար արդեն իսկ հայտնի անձանց կոլեկտիվի անդամի, կուտեստասիանի, արտելականի, ընկերոջ, հարևանի կողմից (մի խոսքով՝ ով էլ այդպիսի արարք կատարի) և ըստ տվյալ արարքի կոնկրետ հանգամանքների ձեռք կառնեն հասարակական ներգործության համապատասխան միջոցներ, որոնք են՝

1. պարտավորեցնել իրավազանցին տուժողից կամ համապատասխան կոլեկտիվից, հրապարակորեն ներողություն խնդրել,

2. ընկերական զգուշացում անել,

3. հասարակական պարտավանքի ենթարկել,

4. հասարակական նկատողություն անել,

5. մինչև 100 ռուբլի դրամական տուգանքի ենթարկել,

6. հարց դնել տվյալ կոլեկտիվի ղեկավարության առաջ (որտեղ նա աշխատում է) նրան տեղափոխելու ցածր վարձատրվող աշխատանքի՝ մինչև 3 ամիս ժամանակով, կամ այնպիսի աշխատանքի, որը կապ չունենա նյութական արժեքների տնօրինման ու պահպանման հետ, կամ ցածրացնելու պաշտոնը, կամ էլ առհասարակ հեռացնելու աշխատանքից:

7. հարց հարուցել ժողովրդական դատարանի առաջ՝ վտարելու զբաղեցրած բնակարանից, եթե անհնար է համատեղ ապրելը, անխնամ վերաբերմունք է ցուցաբերել դեպի բնակարանային ֆոնդը, կամ շարամտորեն չի վճարում բնակվարձը.

8. պարտավորեցնել մեղավորին իր աշխատանքով հատուցել պատճառած վնասը:

Այս ամենից հետևում է, որ ընկերական դատարանները կարող են զբաղվել բավականին լուրջ բնույթ ունեցող հարցերով: Սակայն զանցառուներին կարող են ենթարկել միայն վերևում թվարկված ներգործության միջոցներին, որոնք ոչ մի կապ չունեն ո՛չ արտաքսման, ո՛չ մեկուսացման, և ո՛չ էլ համանման որևէ այլ պատժի հետ: Նկատի ունենալով այդ, ումանք տարակուսում են ընկերական դատարանների կողմից ըստ պատշաճ դեպքերի նշանակվելիք այդ միջոցառումների էֆեկտիվության վերաբերյալ, այնինչ հաղիվ թե հարկ լինի ապացուցելու, որ դա շրջահայաց կարծիք չէ և զուրկ է որևէ հիմքից: Այդպես մտածողները ըստ երևույթին մոռանում են, որ զանցառուին և նույնիսկ հանցագործին կարելի է ուղղել ոչ անպայման պատժելով կամ միմիայն պատժով: Նրանք մոռանում են, որ հաղթանակած սոցիալիստական հասարակարգի քաղաքացին թշնամական հարաբերության մեջ չէ այդ հասարակարգի հետ, այլ նրա ստեղծողն ու նրա մեջ ապրողն է: Հետևապես, նա ինքը կարող է դատապարտել իրեն, այդ նույն հասարակության մեկ այլ անդամի, կամ կոլեկտիվի նկատմամբ ցուցաբերած անվայել քայլի համար, եթե միայն նա բոստ պատշաճին զգա իր արարքի անթույլատրելիությունը:

Բացի այդ, անուշադրության է մատնվում ամենակարևոր նշանակություն ունեցող այն հանգամանքը, որ հանձինս ընկերական դատարանի և նրան լիազորած կոլեկտիվի, զանցառուի դեմ-հանդիման կանգնած է ոչ թե մի առանձին պաշտոնյա, օրինակ միլիցիոներ, քննիչ, գատախապ և այլն, այլ մի ամբողջ կազմակերպություն, հասարակայնություն, որին նա պետք է հաշիվ-տա որպես նրա մի մասնիկը իր վարքագծի համար, որպես կոլեկտիվի, կազմակերպության անունն անվանարկող, պետական — համաժողովրդական բարիքը փչացնող, վատնող, որպես նրան նյութական ու բարոյական վնաս պատճառող:

Հասարակայնությունը մեկ անգամ կզիջի նրան, իսկ եթե

դրանից անհրաժեշտ եղրակացություններ չանի նա և հաշիվ չնստի նրա հետ, թեև դա անհնար է, որովհետև դեռևս ոչ մի արգելք չի դիմացել սովետական հասարակայնության անհաղթ ուժին, ապա ժողովուրդն այս անգամ, նայած անհրաժեշտության, կաշխատի կարգի բերել զանցառուին: Ընդ որում, այս դեպքում նրա նկատմամբ կկիրառվեն դատախարակական ավելի խիստ միջոցներ: Հայտնի է, որ եթե որևէ մեկը վատ հարաբերության մեջ է իր հարևանի հետ, ապա մոտիկություն է հաստատում մյուս հարևանի հետ, եթե այդպիսի վիճակի մեջ է մի ընկերոջ հետ, ապա ընկերակցում է մեկ ուրիշին: Բայց եթե նա նման դրության մեջ լինի հասարակայնության — ժողովրդի հետ, ապա նա ուրիշ համախոհ չի ունենա, ժողովրդին հակադրվողը հակադրվելու է անհաղթահարելի ուժի հետ:

Կգտնվի՞ արդյոք մեկը, որ շտեմնի, չզգա և չհաշտվի այդ մտքի հետ: Շրջահայաց ամեն մի մարդ կպատասխանի ո՛չ, եվ չնայած դրան, եթե մեկն ու մեկը հաշիվ չառնի այդ ու համառորեն անվայել պահի իրեն, ապա ընկերական, նույն վեհանձն, բայց չլիջող դատարանի կողմից կարող է արժանանալ հարկադրական միջոցների, այն է՝ գործը դատաբանչական օրգանների զատին հանձնելուն (տե՛ս կանոնադրության 15-րդ հոդվածի 8-րդ կետի 3-րդ պարբերությունը):

Պարզ է, որ այստեղ երկընտրանքի հնարավորություն չկա: Ընտրությունը մեկ է՝ մեղանշել, ներողություն խնդրել, ուղղվել, դատախարակվել, պատրաստակամություն հայտնել և անել իրենից կախված ամեն բան՝ գործարար կերպով ապացուցելու, որ իր կյանքում տեղի ունեցածը պատահականություն է, կամ հետևանք է երևույթները ո՛չ ճիշտ հասկանալու ու գնահատելու, որ դա մի թյուրիմացություն էր, եղավ ու անցավ և այլևս չի կրկնվի ու չի լինի:

Ահա ուղղվելու ու դատախարակվելու և՛ թեորիական, և՛ պրակտիկ հիմքը, որն անհամեմատ ավելի ընդունելի ու հուսալի է, քան անվերապահ հարկադրանքը (կալանքը), որը ոչ

սակավ դեպքերում, ոչ միայն չի նպաստում դատարակութեան գործին, այլև ընդհակառակը, պարարտ հող է ստեղծում է՝ ավելի վատթար ուղղություն վերցնելու և ապա այդ «ուղուն» հետամտելու համար:

Հնկերական դատարանները և նրանց կողմից կիրառվող միջոցները խարսխված են կոմունիզմի ծավալուն շինարարություն ձեռնարկած սովետական քաղաքացիների գիտակցական կարգապահության վրա, սոցիալիստական համակեցության կանոնները հարգելու և բարյացակամությամբ կատարելու վրա:

ՍՄԿՊ XXI համագումարին տված զեկուցման մեջ ընկ. Խրուշչովն ասաց.

«Մի՞թե սովետական հասարակայնությունը չի կարող հաշիվ տեսնել սոցիալիստական իրավակարգը խախտողների հետ: Իհարկե, կարող է: Մեր հասարակական կազմակերպությունները դրա համար ունեն ոչ քիչ հնարավորություններ, միջոցներ ու ուժեր, քան միլիցիայի, դատարանի և դատախազության օրգանները...»

Երբ ակտիվորեն կգործեն հասարակական ընկերական դատարանները և հենց հասարակայնությունը մարդիկ կառանձնացնի հասարակական կարգ ու կանոնի ապահովման համար, այդ ժամանակ անհամեմատ հեշտ կլինի կովել օրինազանցների դեմ: Կարելի կլինի այդ կարգի օրինազանցին հայանաբերել ոչ միայն այն ժամանակ, երբ նա արգեն ղանցանք կամ հանցանք է կատարել, այլ այն ժամանակ, երբ նրա մեջ ի հայտ գան հասարակական վարքի նորմաների շեղումներ, որոնք կարող են նրան հասցնել հակահասարակական արարքների: Մարդիկ կարող են ժամանակին ներգործել նրա վրա, որպեսզի խափանեն նրա վատ հակումները: Պետք է ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք կանխելին, իսկ հետո նաև լիովին բացառելին առանձին մարդկանց որևէ այնպիսի զանցանքը, որը վնասում է հասարակությանը»¹:

¹ Ն. Ս. Խրուշչով, ՍՄԿՊ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնսոլիդացիայի թվերի մասին, Հայպետհրատ, Երևան, 1959 թ., էջ 147—148:

Ուղեցույց ունենալով Ն. Ս. Խրուշչովի զեկուցմամբ տրված ցուցումները և ՍՄԿՊ XXI համագումարի գերեկտիվները, սովետական հասարակայնությունը մեծագույն համակրանքով է արձագանքում պարտիայի ու Սովետական կառավարության այս նոր և հեռատես կուրսին, որը թելադրված է Սովետական պետության ու սոցիալիստական հասարակարգի զարգացման խնդիրների պատմական վերլուծման ու առաջ տանելու անհրաժեշտությամբ:



Նշված միջոցառումների թվում ոչ պակաս նշանակություն ունի ՍՄԿՊ Գերագույն դատարանի Պլենումի 1959 թվականի հունիսի 19-ի որոշումը, որով վերակառուցվում է դատաքննչական օրգանների աշխատանքը:

Այդ միջոցառումները նախորդող ժամանակաշրջանում դատաքննչական օրգանները գործում էին գրեթե անվերապահ իրավունքներով: Ճիշտ է, ժողդատարանների ընդհանուր-հավասար, փակ (զաղտնի) ընտրություններ անցկացնելուն զուգընթաց նրանք պարբերաբար հաշվետվություն են ներկայացնում կոլեկտիվների ընդհանուր ժողովներին, բայց դա ունի առավելապես դատարանի գործունեության ընդհանուր ուղղությունը պատկերելու նշանակություն և ոչ թե դատի ենթակա կոնկրետ անձի բախտը երկուստեք, այսինքն հասարակայնության ու դատարանի կողմից տնօրինելու նշանակություն:

Հիմնարկ - ձեռնարկությունները, հասարակայնությունը հաճախ միջնորդություններ էին ներկայացնում այդ օրգաններին, խնդրելով ազատ արձակել դատի տակ եղած առանձին անձանց, նկատի ունենալով նրանց ծառայական, ընտանեկան և դրական հատկանիշները: Սակայն, այդ միջնորդությունները մեծ մասամբ մնում էին անհետևանք, որովհետև տի-

րապետող կարծիքը դատի տրվածին միայն պատժելու միջոցով ուղղելն էր:

Սոցիալիզմի հաղթանակի և կոմունիզմի ծավալուն շինարարութեան բուն վերելքի հետ առնչութիւն չունեցող այդ սխալ և ոչնչով չհիմնավորված տենդենցը թեև արդարացում չէր էլ գտնում իրական կյանքում, բայց և այնպէս մնում և գործում էր: Հետևանքը լինում էր այն, որ իրավախախտումները, հակահասարակական երևույթները առանձին բնագավառներում նվազելու կամ վերանալու փոխարեն՝ տեղ-տեղ աճում էին:

Պարզ է, որ հանդուրժել այդպիսի վիճակ նաև այսուհետև, հնարավոր չէր: Անհրաժեշտ էր ոչ միայն կանխել, այլև արագ կերպով վերացնել, շտկել նման դրութիւնը, ինչպէս այդ պահանջվում է ՍՄԿՊ XXI համագումարի գերեկտիվներով:

ՍՍՌՄ Գերագույն դատարանի Պլենումի վերոհիշյալ որոշմամբ ղեկավար պարզաբանումներ տրվեցին գատական օրգաններին: «ՍՍՌՄ Գերագույն դատարանի Պլենումը, — ասված է նշված որոշման մեջ, — անհրաժեշտ է համարում դատական օրգանների ուշադրութիւնը հրավիրել այն բանի վրա, որ հանցագործութիւնների և այլ իրավախախտումների դեմ մղվող պայքարի ուժեղացումը չի կարող հանգեցվել պատժի խիստ միջոցների մեխանիկական կիրառմանը: Այդ նպատակին հասնելու համար, ամենակարևորը հանդիսանում է լայն հասարակայնութեան ներգրավումը հասարակական կարգի պահպանման ուղղութեամբ միջոցառումներ անցկացնելու, հանցագործութիւնները կանխելու և իրավախախտումներ ծնող պատճառները վերացնելու գործում:

...Անհրաժեշտ է բարձրացնել դատական գործունեութեան դատարարակազմի գերը, հասարակական նշանակութիւն ունեցող գործերը քննել դատական պրոցեսներում, պետական ու հասարակական մեղադրողների և պաշտպանութեան մասնակցութեամբ, վճռականորեն հրաժարվել պատժամիջոցներ քննարկելու ձևական մոտեցումից, նշանակելով այդպիսիք բացարձակապես ըստ օրենքի պահանջի, այն հաշվով, որ դատա-

բանի կողմից ընտրված պատժամիջոցը առավելագույն չափով նպաստի դատապարտյալի ուղղելուն ու վերադաստիարակելուն և նոր հանցագործութիւններ կատարելը կանխելուն»: Յուցում տրվեց նաև այն մասին, որ անհրաժեշտ է ավելի սերտ կապ պահպանել հասարակական կազմակերպութիւնների և աշխատավորների կոլեկտիվների հետ, պարզաբանելով նրանց հանցագործութիւնների դեմ պայքարելու մասին օրենսդրութիւնը, հասարակական կազմակերպութիւնների ու աշխատավորների կոլեկտիվների իրավունքը՝ միջնորդութիւններ ներկայացնել դատարանների առաջ, պայմանականորեն դատապարտելու և պայմանականորեն դատապարտվածին իրենց դատարարակութեանն ու ուղղմանը հանձնելու մասին:

Տրված պարզաբանումների մեջ հատկապես ընդգծվել է, որ այն դեպքերում, երբ ըստ գործի հանգամանքների հանցագործութիւն կատարած անձանց ուղղվելը հնարավոր է առանց ազատազրկում կիրառելու, դատարանները պետք է լայնորեն կիրառեն պատժի այնպիսի միջոցներ, որոնք կապ չունեն ազատազրկման հետ, ինչպէս նաև պայմանականորեն դատապարտումներ և հասարակական կազմակերպութիւնների ու աշխատավորների կոլեկտիվների միջնորդութիւնների առկայութեան դեպքում պայմանականորեն դատապարտվածներին հանձնեն նրանց՝ վերադաստիարակելու և ուղղելու համար: Ըստ որում այդ ցուցումը հավասարապես վերաբերում է ոչ միայն գործը ըստ էութեան քննող դատարաններին, այլև դատական վերադաս օրգաններին (տես 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերը):

Չի կարելի չնկատել, որ այս միջոցառումն ունի քաղաքական-բարոյական և դատարարակազմի հսկայական նշանակութիւն:

Գումարվեցին դատական աշխատողների ռեսպուբլիկական խորհրդակցութիւններ՝ այդ որոշման իմաստն ու ոգին լայնորեն պարզաբանելու համար: Պետք է նշել, որ այդ որոշումը դատական օրգանների կողմից ի ղեկավարութիւն ընդունվեց

մեծ ոգևորութեամբ և արդեն իսկ առաջացրել է լուրջ տեղաշարժ:

Անցած մի քանի ամիսների ընթացքում դատական օրգանները ռեսպուբլիկայի զանազան հասարակական կազմակերպություններից ստացել են ավելի քան 300 միջնորդություն այս կամ այն արարքի մեջ մեղավոր և դատի տակ գտնվող անձանց հասարակությունից շեկուսացնելու և նրանց հետագա դաստիարակության գործը իրենց կողմնակիցներին հանձնելու մասին: Ներկայացված շատ միջնորդագրերով մտցվում են կոնկրետ ու գործարար առաջարկներ տվյալ հարցի տնօրինման կապակցությամբ: Ստացված միջնորդությունների մեծ մասը կազմված է պատասխանատվության բարձր գիտակցությամբ: Որպես կանոն, տվյալ անձին դաստիարակելու պարտավորություն ստանձնելով հանդերձ, միջնորդագրերում հավաստիացումներ էին արվում նրան ավելի պարտաճանաչ և քրիստոնեական վարքագծի տեղ դարձնելու վերաբերյալ:

Բերենք մի քանի բնորոշ օրինակներ:

Կառուցվածքների և շինանյութերի Երևանի գիտահետազոտական ինստիտուտի կոլեկտիվը 1960 թ. հունվարի 8-ին քննության առնելով ինստիտուտի աշխատակից, պետական հանցագործությունների մասին օրենքի 17-րդ հոդվածի առաջին մասով մեղադրված Արսեն Կարապետի Հովհաննիսյանի վերաբերյալ միջնորդություն հարուցելու հարցը, որոշել է՝

1. Հարց հարուցել դատական օրգանների առաջ՝ Հովհաննիսյանի գործով կազմակերպել դատական ցուցադրական պրոցես:

2. Գործով որպես հասարակական մեղադրող առաջադրել ինստիտուտի աշխատակից Լ. Ն. Իոաննիսյանին, իսկ որպես հասարակական պաշտպան՝ գիտությունների թեկնածու Լ. Ա. Զաքարյանին:

3. Միջնորդել գործը քննող դատարանին նրա հետագա դաստիարակության գործը հանձնելու իրենց կողմնակիցին և վերջապես՝

4. Սույն արձանագրությունը կցել Հովհաննիսյանի քրեական գործին:

Երևան քաղաքի կենտրոնական շրջանի ժողդատարանը 1960 թ. հունվարի 11-ի դատավճռով Ա. Հովհաննիսյանին դատապարտել է մեկ տարվա կալանքի: Սակայն, ընդառաջելով հիշյալ կոլեկտիվի ցանկություններին, պատիժը փոխարինել է պայմանական դատապարտումով և Հովհաննիսյանի դաստիարակության գործը հանձնել է նույն կոլեկտիվին:

Քաղ. նազարյանը խախտելով ձկան որսով զբաղվելու վերաբերյալ գոյություն ունեցող կանոնները, ձկան որս է կատարել պայթուցիկ նյութերի օգտագործմամբ: Եղեգնաձորի շրջանի ժողդատարանը քննության առնելով նազարյանի քրեական գործը, հասարակական մեղադրողի պահանջով, 1959 թվականի դեկտեմբերի 12-ի դատավճռով նրան դատապարտել է մեկ և կես տարվա ազատազրկման: Սակայն, հարգելով նույն շրջանի Գետափ գյուղի կոլտնտեսականների ժողովի միջնորդությունը, ժողդատարանը նրան ենթարկեց պայմանական ազատազրկման և նրան դաստիարակելու գործը հանձնեց նշված կոլեկտիվին:

Ժողդատարանի կողմից բավարարվել են նաև այն միջնորդությունները, որոնք բերվել էին քաղ. Խ. Մովսիսյանի գործով, որը դատի էր տրվել ինքնագլուխ կերպով շինարարությամբ զբաղվելու համար, Ղազմայում գործող հետախուզական պարտիզի աշխատակից Ս. Պողոսյանի գործով որը մեղադրվել էր պարտիզի մեկ այլ աշխատակցին վիրավորելու մեջ:

Երևան քաղաքի նախկին Կիրովյան շրջանի ժողդատարանը, քննության առնելով Երևանի կինոստուդիայի աշխատակից Մելսիկ Իսրայելյանի քրեական գործը և ելնելով նրա կատարած արարքի բնույթից, նրան դատապարտեց վեց տարվա բանտարկության: Հաշվի առնելով մի շարք հանգամանքներ և առանձնապես ստուդիայի ԿԿՄ կազմակերպության միջնորդությունը, Իսրայելյանի դաստիարակության գործը վերապահվեց ստուդիայի ԿԿՄ կազմակերպությանը, իսկ նույն գործով մեղադրված մյուս դատապարտյալի նկատմամբ թեև հասարակական կազմակերպություններից միջնորդություն չէր

ստացվել, այնուամենայնիվ ժողդատարանը նպատակահարմար չհամարեց կալանքի տակ պահել նրան և հանձնեց այն կոլեկտիվին, որտեղ նա աշխատում է, զբաղվելու նրա դաստիարակության հարցով:

Ժողդատարանը միաժամանակ որոշեց Իսրայելյանի հարցը քննության առնել միջնորդություն ներկայացնող կազմակերպության ժողովում:

Մելսիկը, այսինքն՝ դատապարտյալը, քանիցս խնդրեց ժողդատավորին թողնել կալանքը որպես կալանք, թեկուզ ավելացնել այն 1—2 տարով, բայց կոլեկտիվի առաջ չկանգնեցնել իրեն: Անիմաստ չէր Մելսիկի խնդրանքը, որովհետև նա, ըստ երևույթին գիտեր, թե ինչ է նշանակում հանցավորին կանգնել հասարակության բազմաթիվ զայրացիլ աչքերի առաջ: Այդ խնդրանքը մնաց անհետևանք: Շուտով գումարվեց ստուգիայի ԼԿԵՄ կազմակերպության ընդլայնված ժողով: Ժողովականների առաջ բեմահարթակի վրա էր Մելսիկ Իսրայելյանը: Նա լսում էր մեկը մյուսի հետևից հանդես եկող ժողովականների խոսքերը, որոնք իրեն էին հասնում պայթյունի պես.

«Ինչպե՞ս համարձակվեցիր նսեմացնել մեր կոլեկտիվի պատիվը, ինչպե՞ս շամաչեցիր ոտնձգություն կատարել, հանդգնում ես չհարգել հորդ հիշատակը»¹:

Ամոթից շիկնած, հոգով դառնացած Մելսիկը հազիվ հազ էր տիրապետում իրեն: Լսում էր ընկերներին, վերհիշում ուրախ, քաղցր հանդիպումները, համեմատում դրանք իր այդ օրվա վիճակի հետ ու մտատանջվում: Քիչ շտեկեց ժողովը:

¹ Ժողովականները նկատի են ունեցել Մելսիկի հոր՝ Սովետական Ռուսակի սպա ընկ. Իսրայելյանի նամակը, որը նա գրել է 1942 թվականին, ծանր վիրավորված վիճակում, մահն աչքի առաջ, հուպիտայում պատկած ժամանակ և խնդրել է իր կնոջը՝ այդ նամակը Մելսիկին հանձնել 1960 թվականին: Այդ նամակը հայտնի էր դարձել դատարանում գործը քննելիս, այն հայտնի էր դարձել նաև ժողովականներին: Այդ նամակով ընկ. Իսրայելյանը, որը մահացել է նամակը գրելուց մի քանի օր հետո, Մելսիկին խորհուրդ է տվել ու պարտավորեցրել լավ սովորել, լավ աշխատել, լինել ազնիվ մարդ, նվիրված Հայրենիքին ու ընտանիքին, ճիշտ այնպես, ինչպես ինքը՝ նամակի հեղինակը:

Բայց Մելսիկը նստել էր զլխահակ, քրտինքը ձակատին, ծանր խոհերի մեջ, արտասովոր աչքերով: Հավաքելով վերջին ուժերը, նա հազիվ-հազ կանգնեց ու կերկերուն ձայնով ասաց՝ «ն եր ե ց ե ք ը ն կ եր ն եր, ն եր ե ց ե ք»: Չեր վստահությունը անպայման կար դարացնե՞մ:

Ահա հասարակական բարոյական ուժի առավելությունը, ահա նրա ազդեցությունը, որն արտահայտություն է գտել նաև ժողովրդական ասացվածքի մեջ և սերնդից-սերունդ ավանդվում է հետևյալ կարճ, բայց իմաստուն խոսքերի մեջ, — «Գեղ կանգնի, գերան կկոտրի»:

Աներևակայելի տպավորություն թողեց Մելսիկի հարցը քննող ժողովը: Դա չեն մոռանա ո՛չ այդ ժողովականները, ո՛չ էլ, մանավանդ, ինքը՝ Մելսիկը: Հուզմունքից ոմանք արտասովում էին: Նրանցից մեկը՝ կինոռեժիսյոր Լևոն Գրիգորյանն էր, որն իր ելույթը եզրափակեց այսպես. «Ես 55 տարեկան եմ, առաջին անգամն եմ լսում ու տեսնում, որ կալանավորին ազատեն կալանքից ու հանձնեն կոլեկտիվի դաստիարակությանը: Պարտիայի այդ միջոցառումը և այդ մեծ վստահությունը մեզ պարտավորեցնում է, և այն մենք կկատարենք պատվով»:

Ժողովի վերջում, երբ քվեարկություն անցկացվեց, պարզ դարձավ, որ բոլոր ժողովականները, առանց բացառության ձայն են տվել հօգուտ այդ հավաստիացման: Իսկ դատարանի հանցեղով ստացված վերջին տեղեկություններից հայտնի է, որ Մելսիկը գործով արգարացնում է կոլեկտիվի հավատը իր նկատմամբ:

Վերևում բերված օրինակները, բարեբախտաբար, եզակի չեն, այլ շնչին մասն են բազմաթիվ այն փաստերի, որոնք լայն տեղ են գտել դատական ապարատի առօրյայում:

Այդ նշանակում է, որ գործունեության նոր մեթոդը, որն առաջ է քաշվել պարտիայի ու կառավարության վերը շարա-

¹ Տե՛ս ժողովի 1959 թ. դեկտեմբերի 12-ի արձանագրությունը:

դրված միջոցառումներով, ամենայն խորութեամբ համակել է սովետական հասարակայնությանը, ակտիվ կերպով մոբիլիզացրել է նրա ուժերը և հաստատակամորեն կողմնորոշել է դրանք՝ կյանքի կոչված նոր խնդիրները ճիշտ կերպով ըմբռնելու և ըստ այնմ տնօրինելու համար: Ըստ որում դրանք տնօրինվում են, ինչպես նկատելի է առաջին արդյունքներից, շատ ավելի հաջող կերպով, քան մինչ այդ:

Այդ նշանակում է նաև, որ պարտիայի և կառավարության առաջադրած նոր միջոցառումները կենսական միջոցառումներ են: Այդ պատճառով էլ դրանք հեշտությամբ կյանքի կոչվեցին ինչպես իրենց կիրառվելու, այնպես էլ էֆեկտիվության տեսակետից: Այդ միջոցառումները բխում են սովետական ժողովրդագիտության հետագա զարգացման արմատական շահերից, սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու հրամայական պահանջներից ու նրա ծրագրային նպատակներից:

Բայց դրանից հետևում է նաև, որ այդ միջոցառումները պետք է գործողության մեջ մտցնել ամենուրեք և ըստ կարելվույն արագ կերպով, պետք է շարունակել զարգացնել դրանք ավելի լայն մասշտաբներով և համարձակորեն:

Մինչդեռ, այդ ուղղությամբ առկա են մի շարք էական թերություններ. որոնք են՝

1. Ժողովրդական կամավոր դրուժինաների գծով:

Երբեմն դրանց կազմում աշխատելու համար առաջադրվում են այնպիսի անձնավորություններ, որոնք արտադրության առաջավորներ չեն, աչքի չեն ընկնում իրենց օրինակելի վարքով և նվիրվածությամբ տվյալ գործին:

Լավ արդյունքների հասնելու համար պետք է դրուժինաները կոմպլեկտավորել ավելի պատրաստված, գործը սիրող դրուժինանիկներով և նրանց ցույց տալ ամենօրյա օգնություն ու ղեկավարություն, այդ աշխատանքն ուշադրութեամբ կենտրոնում պահելով մշտապես:

2. Պատական ցուցադրական պրոցեսներ կազմակերպելու գործում:

Հիմնարկ-ձեռնարկությունների որոշ ղեկավարներ և նույ-

նիսկ դատական օրգանների առանձին աշխատողներ պատշաճ ուշադրություն չեն դարձնում հիմնարկ-ձեռնարկություններում անցկացվելիք ցուցադրական պրոցեսների կազմակերպման վրա: Երբեմն որպես հասարակական մեղադրողներ ու պաշտպաններ առաջադրվում են քաղաքականապես ոչ այնքան պատրաստված, կրթական ցածր մակարդակ ունեցող, իրենց անելիքների մասին բավականաչափ պատկերացում չունեցող ընկերներ: Այդ պատճառով նրանք հաճախ չեն կարողանում ո՛չ մեղադրական և ո՛չ էլ պաշտպանական իրական խոսք ասել: Դրա հետևանքով դատական պրոցեսները երբեմն չեն առաջացնում այն էֆեկտը, որը սպասվում է: Մինչդեռ հիմնարկ-ձեռնարկությունների, հասարակական կազմակերպությունների ղեկավարները պետք է լուրջ ուշադրություն դարձնեն այդ հարցին, որովհետև ցուցադրական պրոցեսները իրենց հերթին, ունեն դաստիարակչական մեծ նշանակություն: Ցուցադրական պրոցեսներն ընդհանուր հասարակական կարծիք են ստեղծում իրավախախտումներ թույլ տվողների նկատմամբ, կոլեկտիվի անգամների մեջ անհանդուրժողական վերաբերմունք են ներարկում թույլ տրված իրավախախտումների և նրա հեղինակների նկատմամբ: Տրամվայ-տրոլեյբուսի պարկի կոլեկտիվում ցուցադրական դատական նիստ կազմակերպվեց մեղադրյալ Հ. Հակոբյանի գործով, սակայն պարկի վարչության ղեկավարները ներկա չէին դատական նիստին, մինչդեռ դա անհրաժեշտ էր:

Չնայած դրան, կոլեկտիվը միահամուռ կերպով դատապարտեց Հ. Հակոբյանի վարքագիծը՝ ծափահարության արժանացնելով դատարանի կողմից նրա նկատմամբ կիրառված սանկցիան:

3. Կոլեկտիվների կողմից ներկայացվող միջնորդությունների գործում:

Ինչպես նշվել է, հիմնարկ-ձեռնարկությունների աշխատավորների կոլեկտիվները և հասարակական կազմակերպություններն իրավասու են միջնորդություններ ներկայացնել

դատաբննչական օրգաններին հանցանք կատարած անձանց հասարակությունից շեկուսացնելու և նրանց դատախարակությունից գործն իրենց կոլեկտիվներին հանձնելու վերաբերյալ, իսկ նշված օրգաններն էլ պարտավոր են ամեն անգամ քննություն անել և լուծել այդ հարցը: Սակայն, կոլեկտիվի միջնորդության անվան տակ հաճախ ներկայացվում են կոլեկտիվի միայն 1—2 ղեկավարների ստորագրությամբ կազմված գրություններ, որոնք բնականաբար, չեն կարող դիտվել որպես կոլեկտիվ միջնորդություններ, որովհետև կոլեկտիվը դրանից փաստորեն ոչ մի տեղեկություն չունի: Նման վերաբերմունք ցուցաբերողները կամ չգիտեն կամ անտեսում են, որ դա անթույլատրելի է, քանի որ «կոլեկտիվ» հասկացողությունը փոխարինվում է առանձին, իսկ երբեմն էլ մասնավոր անձով, որքանով որ կոլեկտիվն իր ընդհանուր ժողովում չի քննել, միջնորդություն ներկայացնելու մասին որոշում չի կայացրել, այլ այդպիսին ներկայացվել է մեկ-երկու անձանց տնավարի գործողությամբ, առանց կոլեկտիվի անգամների գիտություն ու համաձայնություն: Ինչ ասել կուզի, որ այդպիսի կոլեկտիվը չի գրառվի, և չի էլ կարող զբաղվել տվյալ կարգով ազատված անձի հետագա դատախարակության, նրա վրա-անհրաժեշտ հսկողություն սահմանելու, և ամեն անգամ նրա կողմից թույլ տրված խախտումները նրան մատնացուցց անելու և հաշիվ պահանջելու հարցերով: Բացի այդ, նման փոխակերպված ձևով ազատված անձնավորությունը հազիվ թե հաշիվ նստի որևէ մեկի հետ: Նա կարող է նույնիսկ գոռողանալ, թևավորվել հսկողությունից դուրս մնալու պատճառով և կամա-ակամա նորից կրկնել այնպիսի արարք, որի համար նա ո՛չ հասարակական և ո՛չ էլ դատական պատասխանատվության չի ենթարկվել: Կարելի է չտարակուսել, որ դա նույնպես կվնասի ընդհանուր գործին: Հետևապես ներկայացման ենթակա ամեն մի միջնորդություն պետք է անպայմանորեն նախապես քննություն անվի կոլեկտիվի ընդհանուր ժողովում և ներկայացվի, դրա օգտին ժողովականների բացարձակ մեծամասնության համաձայնությունը լինելու դեպքում, ժողովի լրիվ ար-

ձանագրության հետ մեկտեղ, պատշաճ կարգով կնքված և ժողովի ղեկավարության կողմից ստորագրված վիճակում, տվյալ հիմնարկ-ձեռնարկության կամ հասարակական կազմակերպության ղեկավարության ուղեկցական նամակով: Բացի այդ, եթե ժողովը անհրաժեշտ է համարել նաև ներկայացուցիչներ՝ հասարակական մեղադրող կամ պաշտպան ուղարկել, ապա նրանք պետք է լիազորվեն դրա համար և ներկայացնեն այդ լիազորությունը հաստատող փաստաթուղթ՝ նույնպես ստորագրված ու կնքված վիճակում: Հարկ չկա մատնանշելու, որ այդ կարգը չպահպանելու դեպքում կարող է անհրաժեշտ հետևանք չստացվել, որը նույնպես բացասական երևույթ է և ոչնչով չի նպաստի գործի բարեհաջող կազմակերպմանը:

Դատական առանձին աշխատողների մոտ նկատելի է մի տեսակ թերահավատություն, ուստի և անհամարձակություն արտահայտող արամադրություններ այն առումով, թե ինչպե՞ս կարելի է հանցագործին ազատ արձակել, առանց պատժելու, չէ՞ որ նա կարող է ավելի ծանր հանցանք կատարել, ինչո՞ւ զիջել նրան, չէ՞ որ դա վնաս կբերի ընդհանուր գործին և այլն:

Իրականում նման երկյուղ կրելու համար որևէ հիմք չկա, որովհետև նախ և առաջ աշխատավորների կոլեկտիվների դատախարակմանը պետք է հանձնվեն ոչ ամեն տեսակի հանցանք կատարողները, այլ դրանցից նրանք, որոնք կատարել են հանրայնորեն նվազ վտանգավոր արարքներ, իսկ առավել վտանգավոր արարք կատարողները պետք է պատժվեն օրենքի ամբողջ խստությամբ:

Բացի այդ, սոցիալիստական համակեցություն կանոնները խախտողների, առավել ևս հանցագործ արարքներ կատարողների նկատմամբ զիջողություն անելու մասին խոսք լինել չի կարող, որովհետև դեպի կոմունիստական հասարակարգ ընթացող պետության բավականաչափ գիտակից հասարակայնությունը չի կարող հանդուրժել ո՛չ զանցառություններ, ո՛չ էլ, մասնավանդ, հանցագործություններ ու հանցագործներ: Զպետք

է մոռանալ, որ այդպիսի երևույթները ոչ միայն թուլլատրելի չեն, այլև անհանդուրժելի են մեր, ինչպես ներկայի, այնպես էլ առավել ևս ապագայի համար:

«Ինքնին հասկանալի է,— ասում է բնկեր Խրուշչովը,— որ պետական օրգանների առանձին ֆունկցիաների անցումը հասարակական կազմակերպութուններին՝ բնավ չի նշանակում թուլացնել սոցիալիստական պետության դերը կոմունիզմի կառուցման գործում...: Հասարակական կազմակերպութունների կողմից ալժմյան պետական մի շարք ֆունկցիաների կատարումը կընդլայնվի և կամրապնդի սոցիալիստական հասարակարգի քաղաքական հիմքը...»¹:

Այստեղից հետևում է, որ սոցիալիստական համակեցության կանոնները խախտողների դաստիարակութունը հասարակական կազմակերպութուններին հանձնելը ոչ թե զիջողութուն է նրանց համար և, հետևապես, կարգապահության թուլացում, այլ, ընդհակառակը, դա պետք է տանի և իրոք կտանի ղեպի պետական կարգապահության և սոցիալիստական համակեցության կանոնների ամրապնդում, որովհետև այդ միջոցառման հիմքում բնկած է այն անսասան համոզմունքը, որ սովետական հասարակայնության բարոյական ազդեցութունը անվտանգություն է ուժ է, որ դրա գործիքամբ իրավախախտումներ կատարած անձանց վերադաստիարակութունը կիրառողների ավելի դյուրին ու հաջողակ, քան որևէ այլ կերպ: Ուստի, այդ գործում պետք է հանդես բերվի ոչ թե երկչոտութուն, այլ, ընդհակառակը, ավելի համարձակութուն ու գործարար ձեռներեցութուն, այն է՝ որոնել ու ամեն մի կոնկրետ դեպքում գտնել տվյալ անձին դաստիարակելու ճիշտ եղանակը և հասնել դրա հաջող իրականացմանը:

Ի՞նչպիսի դեպքերում կոլեկտիվի դաստիարակությանը հանձնելով՝ յուրաքանչյուր օրինազանցի հարցը պետք է դարձվի

¹ Ն. Ս. Խրուշչով, ՍՍՏՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերի մասին, Հայպետհրատ, Երևան, 1959 թ., էջ 148:

կոլեկտիվի ընդհանուր ժողովի քննության հատուկ առարկան: Ժողովը պետք է լուրջ նախապատրաստվի այն հաշվով, որ ժողովականները բարի ընկերականության ու արդարացիության, բայց անաչառության ու անհանդուրժողականության դիրքերից եռանդուն կերպով քննադատեն իրավազանցի վարքագիծը:

Պետք է հասնել այն բանին, որ իրավազանցի նկատմամբ ստեղծվի թեև բարյացակամության, սակայն թուլլ տրված անվախելի վարքագիծն անխնա կերպով խարազանելու միջնուղտ, որպեսզի նա չդեղորվի՝ իրեն ներելու և, ընդհակառակը, չճուսալքվի իրեն խայտառակելու փաստից, այլ ինքնազիտակցությամբ բարձր գնահատի կոլեկտիվի մարդասիրական, բայց անզիջող վերաբերմունքը և, հետևապես, ինքնակամ կերպով անի իրենից կախված ամեն բան՝ իր բարեխիղճ աշխատանքով և օրինակելի վարքագծով ըստ արժանվույն արձագանքելու կոլեկտիվի պահանջին:

Կարելի է չտարակուսել, որ գործին այդպիսի բարձր կազմակերպվածությամբ վերաբերվելու գեպքում, որպիսի հարցում մեծ անելիքներ ունեն նաև հենց իրենք՝ դատական աշխատողները, որոնք ոչ թե պետք է զանգաղեն, այլ առանձնասանձակից դուրս քան ու համարձակորեն գործի անցնեն, չի կարող լինել դաստիարակման ավելի հուսալի ու վստահելի միջոց, քան կոլեկտիվի դաստիարակութունը, որովհետև դա՝

1. աշխատանքային է՝ գործարար, միշտ կարող է ստուգվել, որովհետև կատարվում է աշխատանքի պրոցեսում,
2. ներողամիտ ու վեհանձն է, բայց համառ է, անաչառորեն պահանջկոտ, որովհետև հասարակայնութունը չի կարող հանդուրժել նման երևույթներ,

3. հասարակական-մասսայական է, հենված է կոլեկտիվի կամքի վրա, ուստի, անառարկելի է, խարսխված է բարոյական անսպառ ուժի վրա, որի ազդեցությանը չի կարող դիմանալ որևէ հանդգնութուն: Դա, հետևապես, դաստիարակման հզոր միջոց է և դրա ավելի համարձակորեն կիրառումը կհասցնի է՛լ ավելի մեծ արդյունքների:

Այդպիսի եղանակով դաստիարակելու երաշխիքը Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XX և XXI համագումարների դիրեկտիվներն են և ի զարգացումն դրանց՝ պարտիայի Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի կողմից ձեռնարկված կոմպլեքսային միջոցառումները, ինչպես նաև պարտիայի ու սովետական ժողովրդի բարոյա-քաղաքական համագործակցությունը:

Դրա երաշխիքը, բացի այդ, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանով առաջադրված խնդիրները կատարելու և գերակատարելու համար ամբողջ երկրով մեկ ծավալված աշխատանքային խիզախության աննախընթաց վերելքն է:



Հեղինակ՝ ԲԱՐԿԵՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

Խմբագիր՝ Լ. ԹՈՐՈՍՅԱՆ

Հրատ. խմբագիր՝ Հ. ՍԻՆԱՆՅԱՆ

Ավագ սրբագրիչ՝ Ա. ՇԱՂԳԱՄՅԱՆ

Վճ 08025

Պատվեր 1180

Տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 30/III—1960 թ.:

Ստորադրված է տպագրության 14/IV—1960 թ.:

Տպագր. 2,5 մամ., հրատ. 1,6 մամ.:

Գինը 60 կ.:

ՀՍՄԻ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությանն էրի և պոլիգրաֆարգյունարանության գլխավոր վարչության Ց 6 տպարան, Երևան, Լենինի պողոտա № 51:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0026725